**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԻՎ/633/2024-2025-1**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 25 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի ապրիլի 25-ին քննելով ՀՀ Ծակքար համայնքի ղեկավար Գվիդոն Ավետիսյանի ընտանիքի անդամ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանի կողմից պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/633/2024-2025 գործը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված

գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ Ծակքար համայնքի ղեկավար Գվիդոն Ավետիսյանի ընտանիքի անդամ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանի Հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի օգոստոսի 20-ին թիվ 01/2671/1-2024 գրությամբ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 10:30-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար:

Նշված ծանուցումը Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանը ստացել է 2024 թվականի օգոստոսի 27-ին: Սակայն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան Հայտարարագիրը չի ներկայացրել:

1.3 2024 թվականի սեպտեմբերի 21-ին պատշաճ ծանուցված Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/685/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ապրիլի 16-ին Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանին է հասցեագրվել թիվ 01/1592-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին ներկայանալ Հանձնաժողով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար:

Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանը 2025 թվականի ապրիլի 22-ին ստացել է ծանուցագիրը՝ (հիմք՝ AL0127510360AM) անդորրագիրը:

1.5 Նշանակված օրը և ժամին Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանի բացակայությամբ տեղի է ունեցել Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.6 Հանձնաժողովը հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի

կարգավորումները, այն է՝ վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար որոշեց թիվ ՎԻՎ/633/2024-2025 վարչական գործի վարույթը կասեցնել:

*Նիստի ընթացքում սույն գործով քննարկվող փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.*

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

3. Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

4. Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

Նիստի ընթացքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ, ՀՀ Ծակքար համայնքի ղեկավար Գվիդոն Ավետիսյանի ընտանիքի անդամ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանը, որպես գործի քննությանը մասնակցող անձ, 2025 թվականի ապրիլի 25-ին՝ նիստի օրը, վարույթի մասնակցի բացակայության հիմքով, կասեցրել է գործի վարույթը:

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովն նշանակել է նոր գործի քննություն՝ 2025 թվականի մայիսի 20-ին:

Օրենսգրքի 246.2-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ *<u>վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը</u>*, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

Նույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած *<u>հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը</u>*:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենսգրքի 246.2-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 4-րդ մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

# Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ Ծակքար համայնքի ղեկավար Գվիդոն Ավետիսյանի ընտանիքի անդամ Ռիմա Ռաֆիկի Ավետիսյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու փաստի առթիվ հարուցված ՎԻՎ/633/2024-2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կասեցնել մինչև կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**